

Բնակչությանը հասանելիք անվճար բուժօգնությունը պետք է տրամադրվի բացառապես անվճար

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը Կոտայքի մարզի բոլոր բուժ.հաստատություններին ևս մեկ անգամ հորդորել է շտապ բժշկական օգնության ծառայությունը կազմակերպել և իրականացնել բացառապես պետական պատվերի շրջանակներում (ԱՆՎՃԱՐ)՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 24-ի N39-Ն հրամանը՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող շտապ բժշկական օգնության տրամադրման չափորոշիչների մասին:

Մարզպետը միաժամանակ հորդորել է ճանապարհատրանսպորտային վթարների, դժբախտ պատահարների դեպքում քաղաքացիներին անհրաժեշտ անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու պարագայում ֆինանսավորման փոխհատուցումը իրականացնել Ավտոտրանսպորտի Պատասխանատվության Պարտադիր Ապահովագրություն (ԱՊՊԱ) իրականացնող ընկերությունների միջոցով՝ վթարի ենթարկված քաղաքացիներին կամ նրանց հարազատներին ազատելով անձնապես վճարումներ իրականացնելու պարտավորվածությունից:

«Եղե՛ք իրազեկված և պահանջե՛ք պետական պատվերի շրջանակներում հասանելի ծառայությունների մատուցումը ձեզ անվճար հիմունքներով: Ցանկացած վճարովի ծառայություն ստանալու դեպքում պահանջե՛ք վճարումը հաստատող փաստաթղթեր», - իր ֆեյսբուքյան գրառման մեջ նշել է Կոտայքի մարզպետը: